ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հոդված 135. Պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերի քննարկման ընդհանուր ընթացակարգը

1. Պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերն Ազգային ժողովի նիստում քննարկվում են հետևյալ ընդհանուր կարգով.

1) մինչև տասական որպե տևողությամբ ելույթներով՝ ըստ թեկնածուների ազգանվան այբբենական հաջորդականության հանդես են գալիս թեկնածուներին ներկայացնելու իրավասություն ունեցող անձինք.

2) մինչև քսանական որպե տևողությամբ ելույթներով հանդես են գալիս թեկնածուները.

3) թեկնածուին ներկայացնող անձը և թեկնածուն ելույթ են ունենում հաջորդաբար.

4) ելույթից հետո թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին կարող են հարցեր տրվել.

5) մտքերի փոխանակություն.

6) մինչև տասական որպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները:

2. *(մասն ուժը կորցրել է 22.06.20 ՀՕ-309-Ն)*

3. Եթե Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա պաշտոնում ընտրելու կամ նշանակելու մասին հարցերը պարտադիր քննարկման ենթակա են Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում կամ կարող են Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում կամ նիստում քննարկվել հետևյալ դեպքերում.

1) թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո, եթե ~~թափուր պաշտոնում~~ թեկնածու առաջադրելու իրավասություն ունեն երկու կամ ավելի թվով մարմիններ, և առնվազն մեկ թեկնածու առաջադրվել է.

2) թեկնածուի առաջադրումից հետո, եթե ~~թափուր պաշտոնում~~ թեկնածու առաջադրելու իրավասություն ունի մեկ մարմին:

4. Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված անձը Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված երդմամբ:

(135-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն, փոփ., խմբ. 22.06.20 ՀՕ-309-Ն)

Հոդված 146. Ինքնավար մարմինների անդամների նշանակումը

1. Օրենքով ստեղծված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մինչև թափուր պաշտոնի առաջացումը, թեկնածու առաջադրելու իրավունք ունեն այդ օրենքով նախատեսված մարմինները: Թեկնածուն առաջադրվում է թեկնածու առաջադրելու իրավունքի ծագման մասին օրենքով սահմանված կարգով տեղեկանալուց հետո մեկամսյա ժամկետում Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով: Դիմումին կցվում են օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը թեկնածուի առաջադրման փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է իրավասու մարմին՝ նշելով պատճառների մասին:

2. Եթե ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մինչև թափուր պաշտոնի առաջացումը, թեկնածու առաջադրելու իրավունքն օրենքով վերապահված է Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությանը, իսկ Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավելի են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները ինքնավար մարմնի անդամի համապատասխան թափուր պաշտոնում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մինչև թափուր պաշտոնի առաջացումը, առաջադրում են նախապես համաձայնեցված մեկ միասնական թեկնածու:

2.1. Եթե օրենքով նախատեսված է ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար մրցութային խորհրդի ձևավորում, և դրա անդամ նշանակելու իրավասությունը վերապահված է Ազգային ժողովի խմբակցություններին կամ Ազգային ժողովի խորհրդին, ապա մրցութային խորհրդի կազմավորման մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Ազգային ժողովի խմբակցությունները կոնսենսուսով ընդունված որոշմամբ նշանակում են մրցութային խորհրդի անդամի մեկ թեկնածու:

2.2. Եթե Ազգային ժողովի խմբակցությունները սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված ժամկետում ինքնավար մարմնի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորվող մրցութային խորհրդի անդամ չեն նշանակում, ապա այդ ժամկետը լրանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, մրցութային խորհրդի անդամին նշանակում է Ազգային ժողովի խորհուրդը՝ Ազգային ժողովի խմբակցությունների առաջադրած թեկնածուների կազմից:

3. Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մինչև թափուր պաշտոնի առաջացումը, օրենքով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը:

4. Ինքնավար մարմնի անդամի նշանակման հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Ինքնավար մարմնի անդամը նշանակվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Ինքնավար մարմնի անդամի պաշտոնում նշանակումը մինչև այդ պաշտոնի թափուր դառնալը կատարվելու դեպքում ինքնավար մարմնի անդամի պաշտոնավարման ժամկետը սկսում է այդ պաշտոնը թափուր դառնալու օրվանից:

(146-րդ հոդվածը լրաց. 13.09.19 ՀՕ-175-Ն, խմբ., լրաց. 22.06.20 ՀՕ-309-Ն, լրաց. 18.09.20 ՀՕ-439-Ն)